ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7. 1958 Общественные науки

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

# ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ „ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔՐԴԵՐԻ ԿԵՆՑԱՂԸ"[1]

*Մենք մինչև օրս չունենք ոչ մի մոնոգրաֆիա, որի մեջ տրված լիներ Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդներից մեկի՝ քրդերի դիտական պատմությունը։ Այս բացը մասամբ լրացնելու է գալիս դրախոսվող աշխատությունը, որի մեջ տրվում է Անդրկովկասի քրդերի անցյալ և արդի կենցաղի ամբողջական նկարագիրը։*

*Աշխատության առաջին բաժնում լուսաբանվում են քուրդ բնակչության տեղաբաշխումը, դրաղմունքը և եկամուտների աղբյուրները, վերլուծվում ընտանիքը և ընտանեկան պաշտամունքները։ Դառն ու ստրկացուցիչ է եղել Անդրկովկասյան քրդերի կյանքը նախասովետական շրջանում։ Նրանք դլխավորապես վարում էին չարքաշ, քոչվորական կյանք, դրաղվում խաշնարածությամբ։ Աշխատավոր քուրդը հողաղուրկ էր և իր դերդաստանի գոյությունը պահպանելու համար ստիպված էր դիմել արտաղնացության դեպի Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնները։*

*Այն ժամանակ, երբ դյուղի բնակչության մեծամասնությունը դաժանորեն կեղեքվում էր աղաների ու բեկերի կողմից, տնքում հարկերի ծանրության տակ, դեղերում կարիքի ու սովի ճիրաններում, քուրդ հարուստները (աղաները, բեկերը), որոնք մեծ դրամադլխի տերեր էին, իրենց ձեռքում էին կենտրոնացրել լավադույն արոտավայրերը և ապրում էին շվայտ ու ցոփ կյանքով։*

*Երբի հեղինակը պատմական, աղդադրական և ֆոլկլորային հարուստ նյութերի հիման վրա ցույց է տալիս, որ Անդրկովկասի քրդերը դրեթե մինչև XIX դարի երկրորդ կեսը ապրում էին մեծ դերդաստաններով, որոնք հետագայում, շնորհիվ դյուղում առևտրա-արդյունաբերական կապիտալի ներթափանցման, դասակարդային շերտավորման ուժեղացման, սկսեցին աստիճանաբար տրոհվել փոքր ընտանիքների։*

*Երախոսվող դրքի հեղինակը հանդամանորեն վերլուծում է Նախասովետական քրդական ընտանեկան կյանքում տեղի ունեցող ամուսնության ձևերն ու նրանց հետ առնչվող սովորությունները։ Այդ շրջանում մենամուսնության կողքին, որը տիրապետող էր հանդիսանում անդրկովկասյան քրդերի մեջ, տարածված էր նաև բազմակնությունը, որը հարուստ քրդերի արտոնությունն էր, բացառիկ դիրք դրավող անհատների մենաշնորհը։ Սովորական երևույթ էր ներկայացնում կնոջ առևանդումը և դլխագին։ Դանի որ հայրիշխանական շրջանում կինը հանդիսանում էր տոհմի ընդհանուր սեփականության մի մասը, ուստի նա ևս ենթակա էր առուծախի։ Ամուսնությունը հարմար առիթ էր հանդիսանում քրդերի դերդաստանի տնտեսական և ռազմական ուժը մեծացնելու համար, և նրանք աշխատում էին ապրանք տալ և դրա փոխարեն կին բերել ու դրանով իսկ ավելացնել ընտանիքի աշխատավոր ձեռքերը և ապահովել նոր սերնդի աճը։*

*Քրդական ընտանիքում մեծ հարդանք էր վայելում շատ երեխաներ ծնող և սնուցող մայրը և, ընդհակառակը, ամենևին հարդանք չէր վայելում ամուլ կինը։*

*Երեխաները պարտավոր են անառարկելիորեն կատարել հոր կամքը։ Նախասովետական շրջանում քուրդ երեխաները խարխափում էին տդիտության ու խավարի մեջ։ Քուրդ եկիդիների մոտ ուսումը նույնիսկ մեղք էր համարվում։ Նախասովետական քրդական ընտանիքում լայնորեն արմատավորված էր արյան վրեժը լուծելու դդացմունքը, որը հաճախ կործանարար հետևանքներ էր ունենում քրդական դերդաստանի համար։*

*Դրքի երկրորդ մասում լուսաբանվում է Անդրկովկասի քրդերի կենցաղը սովետական ժամանակաշրջանում։*

---

[1] Ամինե Ավդալ, *Անդրկովկասյան քրդերի կենցաղը*, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1957, 241 էջ։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության և Հայաստանում սովետական կարգերի ստեղծման շնորհիվ քուրդ ժողովուրդը ընդմիշտ ազատագրվեց ցարական բռնակալների, աղաների և բեկերի շահագործումից։ Սովետական պետությունից ստանալով հող, քուրդ ժողովուրդը անցավ նստակեցության ու սկսեց զբաղվել երկրագործությամբ։ Քուրդ ժողովրդի տնտեսական և կուլտուրական վերածննդի համար վճռական դեր խաղաց կոլտնտեսային կարգը։ Այժմ տասնյակներով կարելի է հաշվել քրդական այն գյուղերի թիվը, որոնց կոլտնտեսությունները միլիոնատեր են։ Քուրդ աշխատավորները կոլտնտեսություններում կատարած իրենց անձնվեր աշխատանքով կերտում են իրենց բարեկեցիկ ու ուրախ կյանքը։ Քրդական գյուղի սոցիալիստական վերակառուցման շնորհիվ արմատական վերափոխման ենթարկվեց քուրդ աշխատավորի կենցաղն ու հոգերանությունը։ Հիմնովին փոխվել է քրդական գյուղի տեսքը։ Այնտեղ նախկինում եղած գետնափոր տների փոխարեն կառուցվել են քաղաքատիպ բնակելի շենքեր, բաղնիքներ, հիվանդանոցներ, դպրոցներ, էլեկտրաղացներ և հասարակական այլ շենքեր։

Քուրդ ժողովրդի կուլտուրական կյանքում վիթխարի դեր խաղաց Սովետական Հայաստանում առաջին անգամ ստեղծված քրդական այբուբենը, որի շնորհիվ քրդական գյուղերը պատվեցին դպրոցական լայն ցանցով, կարճ ժամանակում հաջողությամբ լուծվեց անգրագիտության վերացման խնդիրը։ Քրդերի կենցաղում լայն մուտք է գործում կինոն, որի մասին քրդերը գաղափար իսկ չունեին նախասովետական շրջանում։ Սովետական Հայաստանում ծաղկում ու զարգանում է քրդական գեղարվեստական գրականությունը, որը առատորեն օգտվում է քրդական հարուստ ժողովրդական բանահյուսության ակունքներից։ Քրդերի կուլտուրական կյանքում խոշոր դեր է խաղում «Ռյա Թազա» («Նոր ուղի») քրդերեն լույս ընծայվող լրագիրը։

Գիրքում իր արտացոլումն է գտել զարգացման սոցիալիստական ուղու վրա կանգնած քուրդ ժողովրդի տնտեսական վերածնունդն ու քրդական գյուղում տեղի ունեցող կուլտուրական հեղափոխությունը։

Քրդական գյուղում նոր, սոցիալիստական արտադրահարաբերություններին համապատասխան ստեղծվել է միանդամայն նոր, սովետական ընտանիք, որը խարսխված է ամուսինների փոխադարձ սիրո և հարգանքի վրա։ Սովետական իշխանությունը հռչակեց և գործնականում իրականացրեց կնոջ իրավահավասարություն տղամարդու հետ։ Դրա հետևանքով արմատախիլ արվեցին քրդուհուն ստրկացնող այնպիսի ստորացուցիչ կապանքներ, ինչպիսիք են՝ կնոջ գլխագինը, բազմակնությունը, կնոջ առևանգումը, ծեծը, նրան անչափահաս հասակում և իր կամքին հակառակ ամուսնացնելը։ Մոր և մանկան նկատմամբ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ցուցաբերած վիթխարի հոգատարությունը մեծ չափով բարձրացրել է քրդուհու հեղինակությունը ընտանիքում։ Պատմության մեջ առաջին անգամ քրդուհին, ազատագրվելով տնային ստրկության կապանքներից, ամենաակտիվ մասնակցություն է ունենում երկրի քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքին։

Ներկայումս քրդուհիների գերակշռող մասը աշխատում է կոլտնտեսային դաշտերում, արդյունաբերության մեջ, կուլտուրայի ճակատում և իր ավանդն է մտցնում կոմունիզմի կառուցման մեծ գործում։

Գիրքում տրված է սոցիալիստական հայրենիքի ընդհանուր շահերով ապրող քրդական սովետական ընտանիքի, նրա անդամների նոր հարաբերությունների վառ նկարագիրը։ Սոցիալիստական կարգերի շնորհիվ քրդերի միջից ընդմիշտ վերացավ նաև ցեղամիջյան և ներցեղային պայքարը, դարավոր վրիժառությունը և այդ հողի վրա տեղի ունեցող արյունահեղությունները։

Ցանկալի կլիներ, որ հեղինակը ավելի մեծ տեղ հատկացներ քրդական գյուղի սոցիալիստական վերափոխումներին, սոցիալիստական այն արտադրահարաբերությունների զարգացմանը, որոնք հիմնովին հեղաշրջեցին քրդերի վաղեմի նահապետական կենցաղը, հոգևոր ներքնաշխարհը և դրեցին քրդական նոր սովետական ընտանիքի հիմքերը, ապահովվեցին քրդերի կուլտուրական և երջանիկ կյանքը։

Խոշոր է Ա. Ավդալի գրքի նշանակությունը, այդ աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արված տալու Անդրկովկասի քրդերի անցյալ և արդի կենցաղի ամբողջական նկարագիրը։

Գրքին հավելվածի ձևով կցված են քրդական ժողովրդական բանահյուսության առանձին հատվածներ: Գրքում դետեղված են քուրդ հին բոլշևիկների, անվանի գիտնականների, գրողների, ուսուցիչների, բժիշկների և կոլտնտեսային առաջավորների լուսանկարները:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ «ՈՒՂԵՑՈՒՅՑԸ»

Միասնական ուղղագրության և կետադրության, ինչպես նաև ուղղախոսության պարտադիր կանոնների ուղեցույցը յուրաքանչյուր գրական լեզվի համար անհրաժեշտ պահանջ է: Պրոֆ. Ա. Ղարիբյանի և Դ. Պարիսի հեղինակությամբ վերջերս լույս տեսած «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույցը»[1] այդ պահանջը բավարարելու առաջին հաջողված փորձն է:

«Ուղեցույց»-ի հեղինակները բացատրել և օրինակներով հիմնավորել են քերականական, ուղղագրական և կետադրական կանոնների կոնկրետ գրսևորումները, հստակ ուղղագրական և կետադրական մի շարք նորմաներ, հեշտացրել ուղղախոսության յուրացումը:

«Ուղեցույց»-ը հեշտացնում է հայոց լեզվի ուսուցիչների, գրական և հրատարակչական աշխատողների գործը, նպաստում է գործնական քերականության, ուղղագրության, կետադրության և ուղղախոսության հարցերի մշակմանը:

Ուղղագրական և կետադրական փոփոխություններն զգալի չափով կախված են բառապաշարի հարստացումից և քերականական կառուցվածքի զարգացումից: Հետևելով լեզվի կառուցվածքի զարգացմանն ու կատարելագործմանը, ուղղագրությունը ևս կատարելագործվում է, ճշգրտում արդեն հնացած կանոնները, հարստանում նորերով: Բնական է, որ ուղղագրության և կետադրության զարգացումը որոշ չափով ետ է մնում լեզվի զարգացումից: Հայոց լեզվի ուղղագրության նորմավորման համար մեծ նշանակություն է ունեցել անվանի հայագետ Մ. Աբեղյանի կողմից 1922 թ. մշակված սեֆորմը: Ուղղագրական այս սեֆորմը իր էությամբ առաջադիմական խոշոր քայլ էր ավանդական ուղղագրության անմիօրինակությունների վերացման համար: Միասնական ուղղագրության գործում կարևոր դեր է կատարել նաև Տերմինաբանական կոմիտեն իր մի շարք որոշումներով: Այս բոլորն, անշուշտ, կարգավորել և կայունացրել են հայոց լեզվի ուղղագրության և կետադրության նորմաները:

Գրախոսվող աշխատության մեջ ավելի ամբողջական և բազմակողմանիորեն են լուսաբանված հայոց լեզվի ոչ միայն ուղղագրական և կետադրական նորմաները, այլև քերականության, ուղղախոսության և ոճական այնպիսի հարցեր, որոնք սերտորեն առնչվում են ուղղագրության և կետադրության հետ:

Աշխատության առաջին գլխում հեղինակները, բուն ամենայնի, որոշակի օրինաչափությունների մեջ են դրել ձայնավոր և բաղաձայն հնչյունների, երկձայնավորների և երկհնչյունների ուղղագրությունը, պարզությունն և կարգավորում են մացրել սաստ բառերի առանգարձման մեջ, որով և հեշտացրել են այդպիսի բառերի ուղղագրության յուրացումը: Սաստ բառերի առանգարձման համար հեղինակները աչքի առաջ են ունեցել ոչ միայն հայոց լեզվի հնչյունական հնարավորությունները, այլև ավանդաբար բնդունված և արմատացած բառերի առանգարձությունը:

Երկրորդ գլխում մանրամասնորեն պարզաբանված են հայոց լեզվի հնչյունափոխությանը վերաբերող ուղղագրական բոլոր հարցերը: Դիրքառելով ժամանակակից լեզվաբանության գիտական ավյալները շեշտի և չեշտի հետ կապված հնչյունափոխության վերաբերյալ, հեղինակները մեծ ջանասիրությամբ խմբավորել և համակարգել են հայերենի հնչյունները, բացահայտել նրանց օրինաչափությունները, կանոններ մշակել հնչյունափոխության բոլոր դեպքերի համար և ավել բնդարձակ հավելվածներ: Այդ հավելվածները, ինքնըստինքյան, մեծ կարևորություն են ներկայացնում, որովհետև հոլովման ժամանակ հնչյունափոխվող, նույնիսկ չհնչյունափոխվող բառերը անխտիր հնչյունափոխվում են

[1] Ա. Ղարիբյան, Դ. Պարիս, Հայոց լեզվի քերականության ուղղագրության և կետադրության ուղեցույց, Հայպետհրատ, 1957, 405 էջ: